## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

## ԵՏ-ԷԱՃԾՁԲ-25/8 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **17 սեպտեմբերի 2025թ.**

2025 թվականի սեպտեմբերի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 16 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ФԲԸ-ի շենքում տեղի ունեցավ կանգառասրահների լվացման և մաքրման ծառայությունների ձեռքբերման ԵՏ-ԷԱՃԾՁԲ-25/8 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ռ. Հովհաննիսյան՝ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ФԲԸ-ի փոխտնօրեն,

Ա. Դավթյան՝ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ФԲԸ-ի տրանսպորտի և վարչատնտեսական բաժին պետի տեղակալ,

Ե. Խաչիբաբյան՝ «ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ФԲԸ-ի գլխավոր ճարտարագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ռ. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը՝ «Փրոմուոշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգը չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում հաղթող (ընտրված) մասնակից ճանաչված «ՎԻԵՐԴ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 15.09.2025թ. ներառյալ, գրավոր չի ներկայացրել Պայմանագրի և որակավորման ապահովումները, և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում և կարգով eAuction.am համակարգում չի կցել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, Հանձնաժողովը որոշեց.

1. «ՎԻԵՐԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ՎԻԵՐԴ» ՍՊԸ | անբավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. «ՎԻԵՐԴ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

2. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Հովհաննիսյան ____________

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Դավթյան ____________

Ե. Խաչիբաբյան ____________

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան ____________